

սուրբ հաւատքէն՝ իր շուրջ կը տեսնէ նոր ազանդ մը, որ կ'ուրանայ հանդերձաւ պատիժներու գոյութիւնը, յայտարարելով թէ «քրիստոնէից չիք տանջանս, քէպէտեւ մեղուցեալից իցեմ»⁸⁸, որովհետեւ՝ ըստ իրենց՝ «միայն հաւատքն բաւական են՝ գոնէ ի պատժոց գերծուցանել»⁸⁹։

Ուրեմն, այս ազանդաւորներուն համաձայն՝ հաւատքը բաւական էր փրկուելու համար։ Բայց ասիկա մեղքին փառարանութիւն է, որմէ առաջ կու գայ բարքերու ապականութիւնը, բարոյականը հիմնովին կը խախտի, անառակութիւնը կը ծաւալի։ Այսպիսի պարազաններու տակ՝ Գրիգոր Սարկաւազապետ հակաճառութեան կ'անցնի. աստուածաշնչական բազմաթիւ վկայութիւններով կը հերքէ այս մոլար ըմբռնումը, կը ջրէ հակառակորդներուն փաստերը, մէկիկ մէկիկ, ցոյց տալով թէ հաւատքը՝ թէպէտ հիմնական նապէս անհրաժեշտ՝ չի բաւեր փրկուելու համար, այլ հարկաւոր են նաեւ բարի գործերը, հրաժարումը մեղքէ, հեշտասիրութեանէ եւն...։

3. - Բայց Գրիգոր Սարկաւազապետ իր հակառակորդները կը դռնէ շատ յամառ. անոնք կը պնդէին հաւատքի զօրութեան վրայ, եւ կ'ըսէին՝ թէ անդեղ մեղաւորներն անգամ կրնան արքայութիւն մտնել, եթէ նոյնիսկ անարժան եղած են հաղորդութեան սուրբ խորհուրդին եւ քառասնորեայ պատարագին. «ասեմ այժմուս՝ քէ եւ յոգնամեղքն, քէպէտ եւ ոչ գղջեալ խոստովանութեամբ, եւ ոչ արժանաւորք եղեալ հաղորդութեան մեղսաւարի ի ձեռն քառասնորեայ պատարագին, ի պատժոց [ոչ]⁹⁰ գերծանին եւ զոյսն ժառանգեն եւս, որք առաւել իմացան քան գրեալսն։ Գի այս այնմ հանգոյն է, որք ասեմ՝ եթէ քրիստոնէից ոչ գոն տանջանք»⁹¹։

4. - Այսպիսի մոլար ազանդաւորներու է որ ահա՝ Գրիգոր Սարկաւազապետ կու գայ յիշեցնել Ս. Գրիգոր Լուսաւորչի վարդապետութիւնը, յանուանէ իսկ թուելով «Յաճախապատում»-ի ԺԳ. ճառը, որուն վերլուծումը տուինք մանրամասնօրէն մեր ուսումնասիրութեան սկիզբը⁹². «Սուրբն Գրիգոր ստուգապէս ցուցանէ գրեալ յերեքասաներորդ մատին, քէ չգղջեցելոցն խոստովանութեամբ, եւ ոչ մերձեցելոցն ի փրկական խորհրդոյն, զի՞նչ պիտոյ է ասել վասն նոցա յիշատակի, որ դառն արտասուաց եւ արժանի, եւ ծանր վիշտս ի Քրիստոսէ ընդունելոց են. այլ խոստովանելոցն եւ հաղորդելոցն, քէպէտ եւ ծանրամեղք իցեմ՝ գերծանել ասէ ի պատժոց, եւ գլխատակն առնել հրամայէ»⁹³։

Այս յիշատակութիւնը կը կատարուի զլիսաւորապէս «ի ձեռն գեմմանն Քրիստոսի», ինչպէս տեսանք քիչ վերը։

Եւ ահա, Գրիգոր Սարկաւազապետ ջատաղով կը կանգնի Լուսաւորչեան հաւատքին՝ հաստատելով նախ եւ առաջ հանդերձաւ յաւիտենական պատիժներու գոյութիւնը. եւ այդ՝ ոչ միայն հեթանոսներու կամ անհաւատներու համար, այլ նաեւ այն մեղաւոր քրիստոնէաներուն համար՝ որոնք իրենց մահէն առաջ ցոյց չեն տուած զղջում եւ դարձի նշան։

5. - Վերոյիշեալ ազանդաւորները՝ ըստ Հ. Բարսեղ Սարգիսեանի՝ Պաւլիկեաններն են, որոնք Հայաստանի մէջ յայտնուած են 2. դարուն. եւ որովհետեւ ճառին մէջ յաճախ «այժմուս», «այժմ երեւին», «նոր ամպարշտութիւն» բացատրութիւնները կան, եւ նոյնիսկ ակնարկ մը՝ իբր թէ ազանդի հիմնադրին, նոյն բանասէր Հայրը կը համարձակէր սահմանել նաեւ զրութեան թուականը, այն է 2. դարու կէսին։

Այսքանը առաջին կէտն է։ Կայ երկրորդը, արժանի յատուկ ուշադրութեան։

6. - Հանդերձաւ պատիժներու գոյութիւնը հաստատելէ ետք՝ Ս. Գրիգոր եւ եկեղեցական Հայրերու վկայութիւններով, որոնց մէջ մեծ հեղինակութիւն մըն է Ս. Գրիգոր Լուսաւորչի ընծայուած «Յաճախապատում»ը, Գրիգոր Սարկաւազապետ կ'անցնի հերքելու երկրորդ ծայրայեղութիւն մը. այն է մոլար մտայնութիւնը անոնց՝ որ կը կարծէին թէ քրիստոնէան ինչ մեղք ալ գործէ, նոյնիսկ եթէ անապաշխար վախճանած ըլլայ, միշտ թողութեան կ'արժանանայ. կը բաւէ որ ննջեցեալին համար քառասունքի պատարագներ մատուցուին. նոյնիսկ ի դին՝ յափշտակութեամբ զրաւուած իրերու նուիրատուութեանց. «ի բազմաց լսեմք՝ եթէ այս անուն եւ այն անուն ժառանգք արեւայութեան եղեն. Գի ումեմն՝ հարիւր, եւ ումեմն եւս անելի մատեան քառասուն... եթէ այս անուն՝ պատարագօքն փրկեցաւ»⁹⁴. Եւ այսպիսի բարբառաբաններով «ի քուլամորթութիւն եւ ի յառաքելի կրթեմ գրագումս»⁹⁵։ Ու կ'աւելցնէ. «Յիւրախ տեսանեմք գրագումս յանիքաւորքն նէ յղիացեալ եւ անհոգացեալ, յինչսն ապաստան եղեալ, եւ այլովք գկարեւոր պէտս հոգոյ թողուն, եւ ոչ իմանան քէ գլխաշտակեալն եւ գոգողունն ոչ ընդունի Աստուած»⁹⁶։

Հուսկ գովեստը կը հիւսէ անոնց որ զղջումով կը մեռնին, կը հատուցանեն զըրկեալին եւ աղքատի զղացումներով՝ բաժին կը հանեն եկեղեցւոյ, եւ Զակարիայի նման կ'արժանանան փրկութեան։

Վերջացնելով իր ճառը, կը յանձնարարէ հաւատարմօրէն հետեւիլ Ս. Գրիգոր Լուսաւորչի, եւ անոր «ունկնդիր լինել իբրեւ աշակերտ»՝ վարդապետի, եւ ոչ անելի ինչ քան զիբամայեալսն ի նմանէ՝ իմանալ, ի

կորուստ անձանց եւ այլոց բազմաց. Գի բանք նորա կենդանի են եւ այսօր՝ որ կամիցին սիրով լսել եւ հաւատով ընդունել եւ բազում շահս գտանել ի բանից նորա»⁹⁷։

Այսպէս, Գրիգոր Սարկաւազապետ կը համարի արժանաւոր ներքողեանն հիւսած ըլլալ՝ վերաբարձելով Լուսաւորչեան հաւատքը. Կայ դժոխք եւ յաւիտենական դատապարտութիւն՝ անդեղ մեղաւորներուն համար, նաեւ քրիստոնէաներուն. կայ փրկութիւն՝ ի ձեռն գեմմանն Քրիստոսի՝ մեղաւոր բայց զղջացեալ հոգիներուն համար. բայց՝ ըստ Գրիգոր Սարկաւազապետի՝ պէտք չէ չափազանցել այս վերջին կէտին մէջ, մոռնալով կամ անտեսելով էականը, այն է զղջումի հոգին եւ ապաշխարական զղացումը։

7. - Համեմատութիւն մը դնելով այժմ վերոյիշեալ երկու մոլորութիւններուն միջեւ, կրնանք այսպէս ամփոփել։ Առաջինները (Պաւլիկեանները) չէին հաւատարմեղքին ու հանդերձաւ պատիժներուն. ասկէ՝ ծայր կու տար զեղիս եւ անառակ կեանքը, աւաղակութիւնը ձեռն... վասն վասն ննջեցելոց պատարագն ալ, հետեւաբար, աւելորդ բան մըն էր։ Իսկ երկրորդները (կոչենք՝ պատարագապաշտներ) կ'ընդունէին թէ՛ մեղքը, թէ՛ հանդերձաւ պատիժները. բայց այդ բոլորը կը համարին ջնջել պատարագներով՝ իբր միակ պայման։

Անշուշտ կը նշմարեն մեր ընթերցողները, թէ այս վերջինը նոյն է ԺԲ. դարուն Հայոց մէջ մեծապէս ծաւալած մոլորութեան հետ, որուն դէմ այնքան բուռն կերպով պայքարեցաւ Լամբրոնացին, ինչպէս տեսանք⁹⁸։ Այս պատճառով՝ մենք այս ճառին զրութեան թուականը զուգորդեցինք կը համարենք Լամբրոնացիի Պատարագամատոյցի մեկնութեան։

88. Անդ, էջ 141։

89. Անդ, էջ 145-146։

90. Հաւանութեն՝ ոչ միայն։

91. Անդ, էջ 151-152։

92. «Բազմ» 1959, էջ 83-87։

93. Գր. Սրկ. անդ, էջ 153։

94. Անդ, էջ 154։

95. Անդ, էջ 156։

96. Անդ, էջ 154։

97. Անդ, էջ 156։

98. «Բազմ» 1959, էջ 189-196։

Քանի որ ներկայ վիճարանությունները կո-
րիզը կը կազմէ այս ճառին բովանդակու-
թիւնը, անկողմնակալ եւ առարկայական
մնալու համար, պիտի չուզէինք դիւրու-
թեամբ Զ. կամ Է. դարերուն մէջ դետեղել
Գրիգոր Սարկաւագապետի այս գրութիւ-
նը, զօրացնելու համար մեր փաստերը՝ ի
նպաստ պատարագի « վասն ննջեցելոց »:
Միւս կողմէ, կուտան մըն ալ ունինք մեր
այս մտածելակերպին ի շահ. արդարեւ,
ինչպէս կ'ըլլայ որ Սոսրով Անձեւացի (Ժ.
դարուն) ամենեւին խօսք չ'ըներ այս մո-
լար ըմբռնումներուն դէմ, մանաւանդ եր-
կրորդին, Պատարագի աղօթքներուն իր
մեկնութեան մէջ, ննջեցեալներու ի նը-
պաստ կատարուած յիշատակութեանց ըն-
թացքին, զոր քննեցինք կանխապէս⁹⁹:

Ուրեմն կարելի է եզրակացնել թէ այս
երկրորդ ծայրայեղ ըմբռնումը (պատա-
րագապաշտութիւնը) ծագած ու ծաւալած
է Անձեւացիէն Լամբրոնացին երկրորդ
ժամանակաշրջանին (950-1177), այսինքն
Ժ-ԺԱ. դարերուն. այլապէս՝ անըմբռնելի
է Անձեւացիի լուծիւնը:

Ու թերեւս Գրիգոր Սարկաւագապետի
այս ճառը ժամանակով քիչ մը աւելի կա-
նուխ ըլլայ քան Լամբրոնացին: Ծառը,
1215ին, ճառընտրի մը մէջ անցած է ար-
դէն. հաւանաբար, դոնէ դար մը աւելի
առաջ գրուած է. հուսկ եկած է Լամբրո-
նացին եւ աւելի երկարօրէն ծանրացած
է այս նոյն կէտին վրայ, տալով աստուա-
ծաբանական անդրադոյն բացատրութիւն-
ներ:

Գալով Պաւղիկեաններու համար ըստ
« նոր » կամ « այժմեան » բացատրու-
թիւններուն, հաւանօրէն այդ յորջորջում-
ները պէտք չենք առնել իրենց ամենատեղի
խմբագրութեան, այլ իբր բացատրութիւններ՝
որոնք ամէն դարու ալ կրնան պատշաճիլ,
երբ մանաւանդ աղանդ մը՝ ժամանակ մը
մարելէ վերջ՝ դարձեալ կը սկսի ծաւալիլ.
եւ աղանդ մը՝ որ կը մղէ դէպի անբարո-
յականութիւն՝ ամէն դարու մէջ կը դառն
ճարակ. ու միշտ նոր է՝ այս կամ այն քա-
ղաքին մէջ. հետեւաբար Հ. Բարսեղ Սար-

դիսեանի նշմարած աղանդը՝ հասկնալու
ենք լայն իմաստով Պաւղիկեան հոսանք:
Թողունք որ Հ. Բ. Սարգիսեան կը պնդէ
իր տեսակէտին վրայ, որովհետեւ սոյն
ճառին մէջ մատնանշած է Սորենացիէն
առնուած ակնյայտ ու բառացի մէջբերու-
թիւններ. հետեւաբար կը համարի գտած
ըլլալ նաեւ Սորենացիի հնութեան պատ-
մական վկայութիւնը մը՝ Զ. դարէն: Սա-
կայն մեղի չ'իյնար այստեղ միւրձիլ այս
մանրամասնութիւններուն մէջ: Գոհացանք
տալով բանասիրական ու պատմական ա-
մէնէն լայն մեկնութիւնը, որ սակայն լոկ
ենթադրութիւն մը չէ:

Ահա նաեւ թէ ինչո՞ւ ոստում մը կատա-
րեցինք մեր ժամանակաշրջանին օղակին
մէջ՝ Լամբրոնացիէն վերջ խօսելով Սար-
կաւագապետի մասին, չուզելով որոշ տե-
սակէտներ պարտադրել մեր ընթերցողնե-
րուն:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Գրիգոր Սարկաւագապետի մեծագոյն
արժանիքը կը կայանայ « Յաճախապա-
տում »-ի ջատագովութեան մէջ, որով հին
աւանդութիւնը անդամ մըն ալ կը հաս-
տատուի պաշտօնապէս:

Նկատելի գլխաւոր նորութիւնը, զոր
կը բերէ Գր. Սարկաւագապետ, ննջեցեալ-
ներու ի նպաստ մատուցուած պատարագ-
ներու մասին ծայրայեղ ըմբռնում ունե-
ցող աղանդաւորներու դէմ կատարած
պայքարն է, զոր գրեթէ միաժամանակ եւ
աւելի հեղինակօրէն կը կատարէր Ն. Լամ-
բրոնացին: Եւ սակայն պատմական ապա-
ցոյցն է ինքնին՝ թէ հայ Եկեղեցւոյ մէջ,
Ժ-ԺԱ. դարերուն, մեծապէս տարածուած
էր ննջեցեալներու հոգւոյն փրկութեան
համար պատարագ մատուցանելու սովո-
րութիւնը, քառասունքի պատարագ, աւե-
լի ճիշտ՝ քառասուն պատարագ, կամ նոյն
խի շատ անգամ կրկնուած քառասունք-
ներ: Գրիգոր Սարկաւագապետ ամենեւին
չի հերքեր այս բարի սովորութիւնը, այլ

99. « Բազմ. » 1959, էջ 154-156:

միայն կը բացատրէ անոր ողջամիտ ըմ-
բռնումը, որ պիտի մղէ մեզ պարկեշտ ու
քրիստոնէական իկեանքի մը. սակայն հիմ-
նական պայմանն է՝ հաւատքէն վերջ՝
փրկուելու. այս պարագային է միայն որ
սուրբ պատարագի մատուցումը պիտի նը-
պաստէ հանդերձալին մէջ:

Ուրիշ մէկ նորութիւնն ալ՝ ակնարկն է
Պաւղիկեան կամ Նոր-Պաւղիկեան համար-
ուած աղանդներու, որոնց համաձայն՝
զործնականին մէջ՝ ննջեցելոց պատարագը
բոլորովին աւելորդ է, քանի որ չկայ
մեղք, չկան հանդերձալ պատիժներ, կը
բաւէ լոկ հաւատքը: Արդեօք այս աղան-
դաւորները, այս կէտին մէջ չեն նոյնա-

նար Թոնդրակեցիներու հետ, որոնք կը
մերժէին սուրբ պատարագին արդիւնքը ի
նպաստ ննջեցելոց, եւ որոնց դէմ կը պայ-
քարէր Պօղոս Տարօնեցի ժԱ. դարուն,
ինչպէս տեսանք¹⁰⁰: Հաստատական պարա-
գային՝ Տարօնեցի եւ Սարկաւագապետ
կ'ըլլան երկու ախոյեանները, որոնց հետ
միանալով Լամբրոնացին, կը կազմեն նը-
ւիրական խմբակ մը, երգուեալ ջատա-
գովներու « Պատարագ վասն ննջեցելոց »
դաւանութեան: Ու Գարեգին Պատրիարք
կը փորձէ դրչի մէկ հարուածով, երկու
տողի մէջ, տապալել այս անյաղթ տի-
տանները, խեղաթիւրելով հայ Եկեղեց-
ւոյ նուիրական աւանդութիւններէն մէկը:

(Շարունակելի)

100. « Բազմ. » 1959, էջ 158-160:

Հ. ՆԵՐՍԷՍ ՏԵՐ ՆԵՐՍԷՍԵԱՆ

ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

ՄԽԻԹԱՐԵԱՆ ՏՊԱՐԱՆ - ՎԵՆԵՏԻԿ, Ս. ՂԱԶԱՐ

Կը ծանուցանենք որ 1952ի մեր Գրացուցակը իր ներքին պարու-
նակութեամբ եւ դիւներով, ներկայ պայմաններուն եւ շտեմարանի
կացութեան անհամապատասխան ըլլալով՝ բոլորովին չ'եղ Ե ա լ կը
համարուի:

Կը խնդրենք, հետեւաբար, մեր յարգելի յաճախորդներէն որ
զրքերու դիւներուն համար հաճին թղթակցութեամբ համաձայնիլ
Տպարանի վարչութեան հետ, մինչեւ մեր նոր Գրացուցակին հրա-
տարակութիւնը:

ՎԱՐՁՈՒԹԻՒՆ ՄԽԻԹ. ՏՊԱՐԱՆ